# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2015 թվականի N 984 - Ն

ԲՆԱՀԻՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆ-ՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱ-ՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 958-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ի կատարումն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել բնաիրային օգնության տրամադրման կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Բնաիրային օգնության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 958-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. սեպտեմբերի 2
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 31-ի N 984 - Ն որոշման

# ԲՆԱՀԻՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի, այսուհետ՝ տարածքային մարմին) միջոցով միջազգային, օտարերկրյա կազմակերպությունների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից որպես մարդասիրական օգնություն կամ բարեգործություն հատկացված բնաիրային օգնության (այսուհետ՝ բնաիրային օգնություն) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն իրավական ակտի դրույթները չեն տարածվում այլ իրավական ակտերով կարգավորվող բնաիրային օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա:

3. Բնաիրային օգնությունը տրամադրվում է անձին (ընտանիքին, այլ սոցիալական խմբի)՝ հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու (կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու և (կամ) հաղթահարելու) նպատակով:

4. Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, հատուկ տրանսպորտային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

5. Տարածքային մարմինը՝

1) բնաիրային օգնության տրամադրման ժամանակ համագործակցում է աջակցող ցանցի հետ.

2) սոցիալական դեպքի վարման շրջանակներում անձին ուղղորդում է աջակցող ցանցի համապատասխան մասնակցի մոտ՝ վերջինիս կողմից իրականացվող բնաիրային օգնության տրամադրման ծրագրում ընդգրկման նպատակով.

3) կարող է նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ստանալ և բաշխել բնաիրային օգնություն:

6. Յուրաքանչյուր բնաիրային օգնության տրամադրման համար հաստատվում է բնաիրային օգնության ծրագիր՝ գործընթացն սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ՝ բացառությամբ սույն իրավական ակտի 5-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի:

## II. ԲՆԱԻՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

7. Բնաիրային օգնության ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝

1) ծրագրի անվանումը և նպատակները.

2) բնաիրային օգնություն հատկացրած կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը (համաձայնությամբ).

3) ծրագրի իրականացման մյուս մասնակից և պատասխանատու կազմակերպությունների անվանումները.

4) ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք, բնակավայր).

5) մեկ բաժին բնաիրային օգնության նկարագիրը (տեսականին, չափի միավորը, մեկ չափաբաժնի պարունակությունը և այլն).

6) բնաիրային օգնության ծրագրի ընդհանուր ծավալը (չափաբաժինների թիվը).

7) շահառուների թիվը և տրամադրման հիմքը.

8) ծրագրի իրականացման ժամկետները՝ սկիզբը և ավարտը:

8. Ծրագիրը հաստատում է՝

1) սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ծրագիրն իրականացնելիս՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը՝ բնաիրային օգնություն հատկացրած կազմակերպության լիազոր ներկայացուցչի կամ ֆիզիկական անձի հետ (համաձայնությամբ) համատեղ.

2) տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետարանի հետ (համաձայնությամբ) ծրագիրն իրականացնելիս՝ Հայաստանի Հանրապետության մարզպետը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետը կամ Հայաստանի Հանրապետության մարզպետը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետը՝ բնաիրային օգնություն հատկացրած կազմակերպության լիազոր ներկայացուցչի կամ ֆիզիկական անձի հետ (համաձայնությամբ) համատեղ:

9. Սույն իրավական ակտի 8-րդ կետով նախատեսված համապատասխան մարմինը հաստատում է բնաիրային օգնության տեղափոխման, բեռնաթափման, պահեստավորման, պահպանման և բաշխման աշխատանքների իրականացման կարգը և սահմանում պատասխանատուներին:

10. Ծրագրի շահառուների հիմնական ցուցակով բաշխման աշխատանքների ավարտից հետո տարածքային մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն իրավական ակտի 8-րդ կետով նախատեսված համապատասխան մարմին է ներկայացնում ծրագրի իրականացման մասին ամփոփ հաշվետվություն, որը պարունակում է տեղեկատվու-

թյուն բնաիրային օգնության՝ ստացված, բաշխված և չբաշխված (մնացորդային) քանակների մասին, ինչպես նաև՝ բնաիրային օգնություն չստացած շահառուների ցուցակը:

11. Ծրագրի ավարտից հետո չբաշխված բնաիրային օգնության տրամադրման համար շահառուների ցուցակը կազմվում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված խորհրդի առաջարկությամբ՝ տարածքային մարմնի կողմից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## III. ԲՆԱԻՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

12. Տարածքային մարմինը, ծրագրի իրականացման մյուս մասնակից կազմակերպությունները բնաիրային օգնության ծրագրի իրականացումից առնվազն տասն օր առաջ զանգվածային լրատվության միջոցներով իրազեկում են բնակչությանը՝ նշելով ծրագրի իրականացման ժամկետները, դիմելու կարգը և շահառուների շրջանակը:

13. Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, իրավաբանական կամ ֆիզիկական անձինք բնաիրային օգնությունը տրամադրում են՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ